



ԼՐԱՏՈՒ  
ՀՈՒՆԻՍ 2013



«Շուկաներ Մեղրիի  
համար»



## ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սույն թվականի հունիսի 1-ին «Շուկաներ Մեղրիի համար» ծրագիրը նախաձեռնեց «Բիզնեսը բիզնեսի համար» (B2B) խորագրով մի միջոցառում, որին մասնակցեցին Մեղրիի տարածաշրջանի մի քանի արտադրողները և հայրենական պոտենցիալ գնորդները քննարկելու հնարավոր համագործակցության հեռանկարները: Ավելի քան 60 մասնակից ներկա էին այս միջոցառմանը: Հանդիպումը կայացավ Մեղրիի տարածաշրջանի Ագարակ քաղաքում: Այս տարածաշրջանում շուկայի մասնակիցները սակավ տեղեկատվություն ունեն շուկայի վերաբերյալ: Հանրային ծառայությունները բավականաչափ չեն ֆինանսավորվում, ուստի շուկայի գների, միտումների, գլխավոր դերակատարների մասին տեղեկատվություն գրեթե չի հրապարակվել, իսկ շուկայի հետազոտման վճարովի ծառայություններն էլ բավականին թանկարժեք են: Ֆերմերների միջև կազմակերպվածությունը և գնորդների ու ֆերմերների միջև փոխվստահությունը բավականին թույլ է: Առավել շահավետ շուկաները հիմնականում հասանելի չեն այս տարածաշրջանի համար: Միջոցառման հիմնական նպատակը վերոնշյալ խնդիրներից առնվազն մի քանիսի համար լուծումներ գտնելն էր: Հանդիպման նպատակն էր շահագրգիռ կողմերի համար ձևավորել

- տարածաշրջանի մրգարտադրության վերաբերյալ ընդհանուր պատկերացում,
- մրգերի պահանջվող ծավալի և որակական հատկանիշների վերաբերյալ ընդհանուր պատկերացում,
- նախնական պայմանավորվածություններ հետագա համագործակցության համար:

Միջոցառման ընթացքում մասնակիցները կազմեցին աշխատանքային խմբեր «չրագործության», «թարմ մրգերի» և «վերամշակողների», որոնք և քննարկեցին իրենց համապատասխան արժեշտային հարիր խնդիրները և

ներկայացրեցին հետևյալ առաջարկությունները՝

- ֆերմերների համար անցկացնել կազմակերպչական, ձեռներեցության, կառավարման և մարկետինգային հմտությունների զարգացման դասընթացներ,
- նվազեցնել հումքի մատակարարման ծախսերը՝ ֆերմերների հետ պայմանագրային համագործակցության զարգացման շնորհիվ,
- բարելավել բարձրարժեք շուկայի հասանելիության ուղիներն առավել արդյունավետ տեղեկատվության և որակի կառավարման հմտությունների զարգացման միջոցով:

Միջոցառման վերջում նախնական կապեր հաստատվեցին ֆերմերների և վերամշակող ու առևտրային կազմակերպությունների միջև, որոնց հետագա զարգացումն ու առավել գործնական փուլ փոխադրվելն ուղղակի անհրաժեշտություն է: Այդ իսկ պատճառով այս նախաձեռնությունը շարունակական բնույթ կկրի և հաջորդիվ կկազմակերպվեն ևս մի շարք հանդիպումներ:

Հունիսի 4-ին ծրագրի թիմը հանդիպում անցկացրեց դոնոր կազմակերպությունների, տեղական կազմակերպությունների և կառավարության ներկայացուցիչների հետ, ովքեր իրենց լուրսն ունեն տարածաշրջանի գյուղատնտեսության զարգացման գործընթացում: Հանդիպման նպատակն էր գործարկել «Գյուղատնտեսական հարթակ» Սյունիք մարզի համար: Պլատֆորմի հիմնական գաղափարն է երկու ամիսը մեկ անգամ մարզպետարանում կազմակերպվող հանդիպումների ընթացքում քննարկել տարածաշրջանում գյուղատնտեսության զարգացման հետ կապված հարցեր: Հուլիսի 2-ին տեղի ունեցավ Պլատֆորմի երկրորդ հանդիպումը, որի ընթացքում մարզպետարանի աշխատակիցները ներկայացրեցին վերջին չորս տարիների ձեռքբերումները: Հանդիպման ընթացքում քննարկվեց նաև Սյունիքի մարզի 2014-2018 զարգացման ծրագիրը: